

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի 2015թ. նիստերի արձանագրություններ

Արձանագրություն 6

2015թ. օգոստոսի 28-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ՝ նախագահությամբ Ռ.Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ.Ասոյանի:

Նիստին ներկա էին գիտխորհրդի 31 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)» բաժնի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացի վերաբերյալ:

(գեկուցողներ՝ դեկան Հ.Ղաջոյան, ամբիոնի վարիչ Լ.Քուրքյան)

2.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ու օտար լեզուների ամբիոնների վերակազմակերպման և օտար լեզվի և գրականության ամբիոն ստեղծելու հարցը:

(գեկ՝ ԲՖ դեկան Թ. Ասոյան)

3.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի լուծարման հարցը:

(գեկ՝ ԲՆՖ դեկան Մ.Ավագյան)

4.ԳՊՀ ինքնավերլուծության գեկույցի քննարկում և հաստատում:

(գեկ՝ գեկ՝ ռեկտոր Ռ.Հակոբյան)

5.2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:

(գեկ՝ դեկաններ Թ.Ասոյան, Մ.Ավագյան, Հ.Ղաջոյան, Ս.Ամիրխանյան)

6.Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց Ռ.Հակոբյանը: Նա ներկայացրեց ԿԳ նախարարի հետ կայացած հանդիպումը, որի ընթացքում բարձր է գնահատվել ԳՊՀ դերը թե՛ կրթական ծրագրերի իրականացման, թե՛ տարածաշրջանում երիտասարդությանը պահելու առումով:

ԳՊՀ ՀՄ ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)» բաժնի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացի վերաբերյալ

գեկուցեց ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանը: Ներկայացնելով կրթության որակի բարձրացմանը միտված գործողությունները՝ նա անդրադարձավ ամփոփիչ ատեստավորմանը, մասնավորապես քննությունների քանակի հետ կապված հարցին: Այդ ուղղությամբ ուսումնասիրվել է այլ բուհերի փորձը և պարզվել է, որ այլ բուհերում ուսանողները հանձնում են 1 կամ 2 քննություն, իսկ ԳՊՀ-ում՝ 3: Քննական հանձնաժողովների հրավիրված նախագահները իրենց գրավոր կարծիքներում

արտահայտվել են հոգուտ 2 քննության: Հարցը քննարկվել է ֆակուլտետի խորհրդում ու համապատասխան ամբիոններում և որոշվել է ամփոփիչ ատեստավորումը անցկացնել 2 քննությամբ: Հարցատոմսերի կառուցվածքը կքննարկվի համապատասխան ամբիոններում: Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Լ.Քուրքյանը նշեց, որ քննությունների քանակի հարցը կարևոր հիմնախնդիր է: Մանկավարժական բուհերում շեշտը դրվում է առարկաների մեթոդիկայի վրա:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ու օտար լեզուների ամբիոնների վերակազմակերպման և օտար լեզվի և գրականության ամբիոն ստեղծելու հարցը ներկայացրեց ԲՖ դեկան Թ.Ասոյանը: Նշվեց, որ նպատակահարմար չէ ուսանողական համակազմի նվազման պայմաններում ունենալ երկու ամբիոն, մանավանդ որ երկուսն էլ սպասարկում են օտար լեզուներ: Ձեկուցողը նշեց, որ հարցը քննարկվել է ֆակուլտետի խորհրդի նիստում, և առաջարկեց երկու ամբիոնների վերակազմակերպմամբ ստեղծել մեկ՝ օտար լեզվի և գրականության ամբիոն:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի լուծարման հարցը ներկայացրեց ԲՆՖ դեկան Մ.Ավագյանը: Նա նշեց, որ իրավիճակի թելադրանքով անհրաժեշտություն կա լուծարել աշխարհագրության ամբիոնը՝ առաջարկելով աշխատանքները դնել կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վրա:

ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը ներկայացրեց համալսարանի ինքնավերլուծության ուղղությամբ տարված աշխատանքները: Նա նշեց, որ աշխատել են կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները, սակայն անհրաժեշտություն զգացվեց փոքրացնել աշխատանքի ծավալը. այն 160 էջ էր կազմում, իսկ այժմ՝ 110 էջ: Չուգահեռաբար ստեղծվել են բուհի աշխատանքները կանոնակարգող նոր փաստաթղթեր: Ստեղծվել է որակի ապահովման ձեռնարկ: Համալսարանում ստեղծվել է շուրջ 72 փաստաթուղթ: Առաջարկվեց հաստատել ինքնավերլուծության գեկույցը:

2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին գեկուցեցին դեկաններ Թ.Ասոյանը, Մ.Ավագյանը, Հ.Ղաջոյանը,

Ս.Ամիրխանյանը: Նրանք նշեցին , որ իրականացվել են բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ուսումնական տարին լիարժեք դիմավորելու համար:

Քննարկվող հարցերի շուրջ ելույթ ունեցան գիտխորհրդի անդամները:

Ամփոփելով նիստը՝ ռեկտոր Ռ.Հակոբյանը անդրադարձավ ընթացիկ հարցերին, որոնք կապված էին անցկացվելիք միջոցառումների, դեկանատներում և ամբիոններում տարվելիք աշխատանքների հետ:

Հիմք ընդունելով զեկուցումները, ելույթները և առաջարկությունները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1.Հաստատել «Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)» բաժնի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը երկու քննությամբ անցկացնելու առաջարկը, հանձնարարել համապատասխան ամբիոններին մշակել հարցատոմսերի կառուցվածքը:

2.Հաստատել ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ու օտար լեզուների ամբիոնների վերակազմակերպման և օտար լեզվի և գրականության ամբիոն ստեղծելու առաջարկը:

3.Լուծարել ԳՊՀ աշխարհագրության ամբիոնը, ամբիոնի աշխատանքները դնել կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վրա:

4.Հաստատել ԳՊՀ ինքնավերլուծության զեկույցը:

5.2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին զեկուցումներն ընդունել ի գիտություն:

Գիտխորհրդի նախագահ՝
Գիտքարտուղար՝

Ռ. Հակոբյան
Թ. Ասոյան